

ՄԻ ՊՏՈՅՑ ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

(Զմիւռնիայի և նորա ծովային ու ցամաքային շրջակայքի անցեալից
ու ներկայից):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ

(Նարունակութիւն ¹)

ԶՄԻՒՌՆԻԱՅԻՑ ՔԻՈՍ ԿԴՋԻՆ

Ես արդէն վաղուց կարօտ էի մի կղզի և կղզիացած կեանք տեսնելու՝
բառիս բուն նշանակութեամբ, բայց ի հարկէ ես ալ ես չէի կարող քա-
ղաքակրթութեան ներկալ դարձամ, երբ շոգեկառք, շոգեմեքենալ, հեռա-
գիր ալնալիսի արագութեամբ հեշտացնում են հաղորդակցութիւնը, Ողի-
սեան, Հոմերեան ժամանակների կղզիացած կեանքը տեսնել: Սակայն և
ալնալէս՝ առաջուց քիչ թէ շատ տեղեկութիւններ հաւաքած լինելով սպա-
սում էի տեսնել ալդ առանձնացած վայրերում մի ալ կեանք, շատ բանով
տարբեր իզմիրցիներինից: Ուստի հէնց որ առիթը ներկայացաւ, ես մի
հալ ուղեկից բարեկամի հետ դարձեալ սիրելի ծովն ելալ: Մեզ տանող
շոգենաւը ռուսական էր, որ Ալէքսանդրիա էր գնում: Ճանապարհորդներ
շատ չկալին. ծովը հանդարտ էր. մենք՝ առանց որ և է աչքի ընկնող մի-
ջադէպի՝ 8 ժամ վետոյ գիշերը կղզին հասանք: Քիտսը գտանում է Լեսրո-
սից հարաւ. Իզմիրից 88 հազարամետր հեռաւորութիւն ունի, իսկ իւր
հանդէպ գտնաող թերակղզուց բաժանւած է մի նեղ պարանոցով: Ալնալէս
որ ցամաքն երևում է և առաջնաստիւտը նաւով մի ժամ հաղիւ քաշում:

Ո՛չ ես և ո՛չ ընկերս տաճկական անցաթուղթ ունէինք, մինչդեռ տաճկական օրէնքով հպատակ ես թէ ոչ՝ քո պետութեան անցաթղթից զատ ունենալու ես և տեղականը, եթէ այլ նահանգ ես գնում Արար մարտաւորը թէև առաջ խիտ դէմք ցուց տւեց, սակայն խմանալով որ մենք հիւրանոցն ենք իշնեւու և մնալու, թող տւեց: Այդ պահանջը իբրև տուգանք աւելացած՝ լիտոյ լրիւ առան իմ տաճկահպատակ ուղեկցից, իսկ ի նկատի ունենալով իմ միղմացուցիչ հանգամանքները՝ ես աննշան տուգանքով բանը վերջացրի:

Գիշեր ժամանակ ծովափնեայ Կասարոն քաղաքը, որ նաև Քիոս է անւանւում, մի առանձին տեսարան չէր ներկայացնում: Մենք շտապեցինք այս կղզու ամենաառաջին և իւր տեսակում համարեա միակ հիւրանոցը, ուր ամարալին մի քանի ամիսները աշխարհի չորս կողմերից՝ Հնդկաստանից, Ամերիկայից, Եւրոպայից, Աֆրիկէից գալիս են բազմաթիւ հարուստ ընտանիքներ ու անհատներ գննէ տարին մի անգամ սիրելի հայրենիքն ու ծննդատեղին տեսնելու և նորան չը մոռանալու և ևս ահա սեղանի շուրջը միշտ լի է լոյներով, որոնք միմեանց պատմում են իրանց առևտրական ընդարձակ ձեռնարկութեանց հետեանքների մասին: Քիոսցի վաճառականը և առաքատաւոր նաւերը, որոնք նաև այս դարում ամիսներով ճանապարհ են գնում, հռչակաւոր են բոլոր լոյների մէջ: Բայց այս բոլոր լոյներից մինն ամենից շատ դրաւեց իմ ուշքն ու միտքը, — երբ տեղեկացաւ նորա կենսագրութեանը: Մի խօսքով նորա ամբողջ էութեան մասին գաղափար տալու համար՝ ասեմ որ ալդ՝ լուծական բազմաթիւ «Սանասարեանցներից» մէկը՝ Գէօրգի Վուբօն էր, որի վրայ մատուց են ցուց տալին, երբ նա իւր սիրելի հայրենիքում շրջում է: Եւ ես այնքան սրտազին և ներքին նմանութիւն գտաւ այս երկու բարերարների մէջ, որ ես այլ ես չեմ կարող մինն երեակալութեանս ներկայացնել՝ առանց միւսին. աւելին՝ ես շատ անգամ չիթիւմ եմ ալդ՝ երկու սիրելի պատկերները, որովհետև արդէն 10 տարի առաջ էր, որ ես անմահ Սանասարեանցին տեսել էի Պետերբուրգում, իսկ լոյն բարերարին միայն մի քանի անգամ տեսնելու բաղժն ունեցաւ: Այո, մեծ է եղել հելլենացին հին ժամանակներում իւր քաղաքակրթական բացառիկ դիրքով, որ այլ ես ոչ մի երկրում կրկնւելու չէ, մեծ է ալդ աղզն ալժմ իւր բարերարութեամբ որ կարելի է ասել՝ նախկին կեանքի աւանդ է: Որքան հաղւադիւտ են տաճկահպատակի մէջ ռուսահայ լազարեանցներ, Սանասարեանցներ, Մելիք-Հալիպղեանցներ, Յովնանեանցներ, այնքան սովորական երեւոթներ են նոյն հանգամանքներում ապրող լոյն մեծ և խորհրդալի սրտերը: Բայց Գ. Վուբօն մեծագործութեանց մասին քիչ լիտոյ, երբ ես կը նկարագրեմ իմ միտքիս ուղեորութիւնը դէպի «Հոմերեան Ապոլոն»¹, որ իշով² ժամ հեռու է քաղաքից: Գիշերն այս խորհրդածութիւններով աւելոյցն մտանք՝ առաւօտեան վաղ վերկենալու և կղզու հետ ծանօթանալու դիտաւորութեամբ: Գիշերը սառնիկ մթնոլորտի

էր, կարծես ամբողջ հիւրանոցը շարժւում էր և չը նայելով այս հողմերին՝ օդը ծանր էր և քնանալը դժւարին։

Քիոս կղզին այժմ ունի մօտաւորապէս 62,000 բնակիչ, իսկ զլխաւոր քաղաքը ուր մինք ենք գտնւում՝ Քիոսը կամ Կաստրոնը արեւելեան կողմում՝ 14000։ Այստեղ նստում է կուսակալից զատ կղզու լուսնական թեմակալը։

Ահա թէ ինչպիսի տեղեկութիւններ է քաղել Բոլեէէ աշխարհագրական և պատմական հանրագիտարանը (Dictionnaire universel d'histoire et de Géographie, 1876) այս կղզու մասին։ Այս հանրագիտարանից ենք հանել նաև մեր վերոյիշեալ մի երկու տեղեկութիւնները։ Խաղողը հաշակաւորէ, ունի թուղ, պետտակ, ձիւթ (մազգաքի)։ Այս կղզին ամենից առաջ մարդաբնակ է եղել ալլազգիների և կարիացիների ¹⁾ միջոցով, ապա՝ Կրէտէ և Էջրօս կղզիների բնակիչներն են եկել։ Նա շատ անգամ է փոխոխել իւր անունը՝ Օֆիուդ, Պիտիւդ, Էթալէ, Մակրիս և վերջապէս Քիոս։ Նա պարծնում էր թէ ինքն է Հոմերոսին կեանք տւել։ Նա հպարտէր էր ողբերգակ Խոնի, պատմաբան Յէսպոմպի, փիլիսոփայ Միարոգորի, քանդակագործ Բիւպալի և Անթէրմի և այլն։ Վաղ ժամանակներում Քիոսը ծովալիս պատկառելի ուժ է ունեցել։ Պարսկական պատերազմների ժամանակ նա բռնադատւած էր եղել զօրքեր մատակարարել մեծ թագաւորին, բայց Քսերքսէսի պարտութիւնից լիտոյ նա միացաւ Կիոնի հետ։ Պելոպոննէզեան պատերազմների միջոցին նա Աթէնքի դաշնակիցը մնաց։ Նա պատիժ կրեց՝ լակեդէմոնական լուծին ենթարկւելու, ապա՝ մակեդոնական թագաւորներին։ Աղէքսանդրի մահաւնից լիտոյ ևս վիճակ ընկաւ Պերգամալի թագաւորին։ Նա Փիլիպպոս Մակեդոնացուն ընդդիմացաւ Հռոմին դաշնակիցը դառաւ, բայց լիտոյ Միհրդատին օգնութիւն հասցնելով նորան հռոմէական հասարակ նահանգի ատրիճանի իջեցրին և այս ժամանակներից լիտ է որ նա կորցրեց իւր բոլոր կարեւորութիւնը։ Խաչակրաց պատերազմների ժամանակ Քիոսը մի քանի անգամ նաւճւեց զէնուացիների, լուսնական և լատինական կաթոնների, թուրքերի և վենետիկացիների ձեռքով։ Գէնուացիներն ալստեղ տիրապետեցին 1346—1566, այսինքն՝ մինչև ալն ժամանակ, երբ թուրքերի ձեռքն ընկաւ 1821 Քիոսցիք արտամբական փորձ արին, բայց իզուր։ Իրանց ճիգերը պատճառեղան այս կղզու աւերմանը, որ սարսափելի կերպով ամպացաւ 1822-ին։

Քիոսը 1880 թ. սարսափելի երկրաշարժներից լիտոյ կրկին վերակենդանացել է։ քանդակների տեղը չինել են հետզհետէ աւելի զեղեցիկ ու կանոնաւոր փողոցներ ճաշակաւոր տներով։ Յետ ընկած թաղերում կան դեռ երկրաշարժից խարխուլ դրութեան մէջ մնացած հին տներ,

1) Փոքր-Ասիայի հարաւարեւմտ արեւմտէն էր։

որոնք հէնց աչն է որ կործանուել են ուղում: Քաղաքի հիւսիսային կողմը գտնուում են թաղեր խղճուկ խոճիթներէնց բաղկացած, որոնց մէջ բնակում են չքաւոր լոյններն ու տաճիկները: Վերջիններս հետզհետէ կենսարոնացել են միջնադարեան գենովական ընդարձակ բերդի պարխապներէ մէջ, ուր շինել են բաւականին կանոնաւոր փողոցներ: Այս բերդը բաւականին ընդարձակ է, երեք կողմից շրջապատւած է մի լաւն ու խոր խրամով եւ ինչպէս երևում է, միջնադարեան եւրոպական բերդերի նման շարժական կամուրջներ է ունեցել: Պարխապները ահագին հաստութիւն ունին եւ կարեւոր կէտերում պատապարած են ամուր անտառախնեքով: Ի հարկէ ժամանակակից ռազմագիտութեան համար միայն պատմական նշանակութիւն ունին ալպլիսի շինութիւնները, որովհետեւ, ինչպէս չափուն է, հիմա թընդանօթի ահռելի ուժին առաջ հողէ թումբերով են պատար դնում, որ աւելի խնդրում է ռումբի զօրութիւնը: Պարխապի վրայ միայն մի երկու տաճիկէն արձանագրութիւններ գտանք, որոնք ցոյց էին տալիս, թէ այս կամ աչն անտառախն ուլ է շինել կամ կառավարել: Այս բերդը բաղմաթիւ պատերազմների եւ հալածանքների ժամանակ հաղարաւոր մարդիկ է պատապարել եւ մինեոյն ժամանակ նոյնքան եւ կենսապուրկ արել:

Քաղաքում եւ շրջակայքում ալ եւ ոչ մի հնութիւն չի մնացել ժամանակը եւ ձախող հանգամանքները ի թիւս որոց եւ լաճախակի ուժգին երկրաշարժները ամեն բան սրբել տարել են: Այժմ այս քաղաքի ամենաներքի հիմնարկութիւնը հարուստ գրատունն է համարւում, որ հիմնուել է 1840-ին մի ալ մեծ բարերարի ձեռքով: Հելլէնագէտ լուրջ գիտնական լոյն Կորալեան էր աչն, որ իւր բաղմահարուստ մատենադարանը իւր սիրելի ազգին նւիրեց: Ասում են, որ ալ 17,000 գրքերը նորանն են եղել, որ թէ եւ անհաւատալի, բայց ընդունելի կարող է լինել, եթէ ենթադրենք, որ նա մեծամասնութիւնը միայն գնած կարող էր լինել:

Այս մատենադարանում եւ ժամանակ ունեցալ մի քանի ուշագրատ տեղեկութիւններ կարգալ որ ինձ պատահեցին, երբ եւ աչքից էի անցնում ալս կամ աչն գիրքը:

Պոլսի Նէոլոգոսի ամսաթերթում տպագրւած էր մի արձան որ գտնուել էր Մեռեալ Ծովից արեւելեան կողմը՝ երկու ժամ հեռաւորութեամբ: Այս արձանի վերալի հրէական տառերը բոլորովին նման են լուսական նախաքրիստոնէական ժամանակների տառերին, միայն աչն տարբերութեամբ, որ առաջինները ձախ էին դարձած կամ գլխի վալը:

Մի զարմանալի զուգադիպութեամբ իմ ուղեկիցս էլ տեսել էր Քրիտի թանգարանում մի արձանագրութիւն ներկած տախտակի վրայ, որի տառերը միւղ ծանօթ լեզուների եւ ոչ մինի տառերին աչքան նմանութիւն չունի, օրքան հալերէնի՝ ո, ս, ա, ն, ց եւ ալ տառերին, մընն ուղիղ, միւսը գլխի վալը, երբորդը դէպի աջ դարձած: Զարարադարար եւ առիթ չունեցալ այս արձանագրութիւնը տեսնելու եւ ամբողջովին իսկութեամբ ընդօ-

ընթակելու Մի քանի անգամ աշնտեղ եղած օրերս գնացինք, փակ էր թանգարանը, որովհետև նորա բովանդակութիւնն անշահն է և անախորդներ շատ հազիւ են պատահում։ Երբ ես էրիթրէի աւերակները գնալով ընկերիս հետ լստով Ձէշմէսմ տեսնեցաւ, նա ցոյց տւեց միայն ընդօրինակած բառ, որ մենք չը կարողացանք վերծանել։ Բայց որովհետև այս արձանագրութիւնը թէ՛ ձեռի և թէ՛ բովանդակութեան կողմից կարող էր լանկարծ թերեւ մի նոր լոյս տալ, ես պէտք է գրեմ Քիոսում ընակեալ լամ հայրենակից բարեկամին և անպատճառ ձեռք բերեմ։ Աշնտեան մի օրինակ կուղարկեմ Թիֆլիս, իսկ միւսը մի մասնագէտի։

Հայութեան վերաբերեալ մի քանի բաներ ես գտաւ. Clementis Galiani. 1686 Gurrentini clerici Regularis Theologi—S. Sedis Apostolicae ad Armenos Missionaris.

«Historia armena ecclesiastica et politica nonc primum in Germania excursa et ad Exemplar romanum diligenter expressa. Աս գիրքը մի քիչ թերթեղի և տեսալ, որ ընդհանրապէս եկեղեց. խնդիրների մասին է խօսում և նպատակ ունի հալ և կաթօլիկ եկեղեցիների միութիւնը. Նոյն հեղինակութիւնից տեսալ նաև «Concilliano Eccl. Armena cum Romana Typie propaganda». ibso 3 fol.

Կարդացի նաև երեկի ճանապարհորդ Տուրնեֆորի 1718 թւականին հրատարակած նկարագրութեան մէջ հայերին վերաբերեալ ի միջի ապոց նաև այս արդէն լատինի առղերը. Les Arméniens sont les meilleurs gens du monde, honnêtes, polis, plein de bon sens et de probité ¹⁾ Էջմիածնի կաթողիկոսին, շարունակում է Տուրնեֆորը, իւրաքանչիւր հալ 15 տարեկանից վեր՝ հարկէ վճարում 5-ամկան սոլ (80==¹/₂₀ լիւրա, որ էր Փրանսիական հին դրամ. ալփմ 5 սանտիմ) ուրիմն մօտաւորապէս 25 սանտիմ կամ ասենք 10 կ. չափս Մալր աթոռի ընդհանուր եկամուտը եղել է 600,000 էքրիւ (մինչև 1795 թ. գործածեալ դրամ==²/₁ լուրլ. մօտաւորապէս), որ ահագին գումար է կազմում։ Նաև պատմում է ալն եկեղ. օրէնքի մասին, որ միայն ալրիններն իրաւունք ունին միմեանց հետ պսակելու (?խմբ.)

Տուրնեֆորը, որ ալնքան աշխարհներ ու ժողովուրդներ էր տեսել և իրրե ճանապարհորդ մեծ կարեւորութիւն ունեցող մարդ էր ²⁾, ահա այս-

¹⁾ Հայերն աշխարհիս ամենալաւ մարդէկն են. պարկէշտ, քաղաքավար, ողջ-մտութեամբ և ուղղամտութեամբ լին

²⁾ Նա մասնաւորապէս ուղարկւել էր Լուդովիկոս XIV կողմից Արեւելքն ու սուլթաններու համար։ Այս հռչակաւոր բուսաբանն սկսեց իւր ճանապարհորդական նկարագրութիւնները Պոլսից Կըէտէ, Հայաստան, Վրաստան և Փոքր-Ասիա և յետոյ Ֆրանս, զիտութիւններից Ակադեմիայի անդամ եղաւ և վերջին ճանապարհորդութիւնից յետոյ Ֆրանսիայի բժշկակ. բարձրագոյն դպրոցում բժշկական ամբիոն ստացաւ։

պէս է խօսում մեր ալն հայրենակիցներին մասին, որոնք մեղանից միայն երկու դար առաջ էին ապրում մեր երկրում:

Մի ալ քար է դանակ նորերս, որի վրազ վերձանելի են. «Դերեղման Մարտիրոսի» հայերէն բառերը Միկնոն ժամանակ սրանից անկախ մեղ պատմեցին մի աւանդութիւն, իբր թէ մի հալ մարդ՝ Մարտիրոս անունով՝ սուլթանից ֆերման է բերել եկեղեցի շինելու համար և իբր պատիժ՝ նաւից զուրա գալիս ծովն է ընկել ու խեղդւել: Այն աւանդութիւնը ամենաազդու կերպիւ արտայայտում է հին լոյսերի զգացմունքները գէպի Հալատանեալց եկեղեցին, որոնց կրօնամալութիւնն և ալօր ալն աստիճանի է հասնում, որ շատ անգամ լուծ ևս, թէ հալի փրկութիւնը լոյն եկեղեցու հետ միանալու մէջն է: Տգէտներ կան, աւելի ռամկններին, որ համոզմունքն կազմել, թէ հալը քրիստոնեալ չէ:

Այստեղ դանակում է նաև Մեծ Նապոլէոնի նախաձեռնութեամբ կատարած Նիսիոսի ամենամանրաման հետազոտութիւնը: Սա 32 հատոր մի մի քառակուսի մետրի չափ ատլասներ են, որոնց մէջ կարողով նկարած են եկիպտական անցեալ ու ժամանակակից կեանքի բոլոր երեւոյթներն ու արտադրութիւնները. կրօնական հիմնարկութիւններ ու ծրագրատարութիւններ, թագաւորական ապարանքներից սկսեալ մինչև մշակի նիստ ու կացը արդ ու զարդը, արհեստ, արւեստ, զիզարւեստ, կենդանի, բոյս և ալլն և ալլն: Այս քարտէսներն ալնքան հետաքրքրական են և բաղմանկալի հարուստ բովանդակութիւն ունեն, որ մի ատլասը հալիւ $1\frac{1}{2}$ կամ $3\frac{1}{4}$ ժամում վարի վերու նաւել կարելի էր: Այս պատկերներին համապատասխան կալին, ի հարկէ, նաև բաղմահատոր հաստալիտ գրքեր, որոնք իրանց սոււարութեամբ աւելի սակաւ աչքի չէին ընկնում:

Կորսիկալի զօրապետի հսկայական լաջոդութիւններն հէնց սկզբից հմարել էին Ֆրանսիական ժողովրդին և միկնոն ժամանակ սարսափ ազդել Դիերեկտորիումին, որ սպառնալի Նապոլէոնին «գլխից ռադ» անելու համար՝ ընդունեց նորա առաջարկութիւնը Նիսիոսը դրաւելու և զաղթականութիւն հատատելու, որպէս զի լետու հեշտ վինի Հնդկաստանը պաշարելով՝ անգլիացիներից խլելու և ահա ալս ժամանակն է, որ ալս մեծ մարդը Ադէքսանդրի պէս՝ միալն աշխարհակալութեամբ չը բաւականաւում լով՝ լզացաւ ալն նաճեալ երկրի ուսումնասիրութեան գաղափարը: Այս նպատակով նա մի հիմնարկութիւն (ինստիտուտ) հատատեց Նիսիոսում, որին լանձնարարեց ալս երկիրը մանրամանութեամբ ուսումնասիրելու մեծ գործը, որով նա գիտնական աշխարհի աչքին աւելի մեծ երեաց՝ քան իւր կորստաբեր նաճումներով:

Եւ ահա երբ հրատարակեցին ալս հետազոտութիւնները՝ նա մի օրինակ նէր ուղարկեց Քիտի գիտնական Կորպուսին՝ մեղ զրադեցնող գրադարանի հիմնադրին՝ առաջարկելով նորան, որ Ստրաբոնի աշխարհագրութիւնը Ֆրանսերէն թարգմանէ:

Քիոսի թէ լոն և թէ տաճիկ ընակիչները հանդարտաբարու մարդիկ են. թէ ասլը թէ կին մարդիկ համեստ են և, ի հարկէ, մանաւանդ լոններն ամենեւին չեն նմանում իրանց իզմիրցի հայրենակիցներին, որոնք նոն իսկ իզմիրի հիմնադրութեան օրից, ինչպէս երևում է, մոլի և զեխ կեանք են վարել: Այս համեստ կղզում ասլ ևս չեն տեսնել լոն կնոջ փողոցի մէջ աթոռներ դնել ու նստելը, սնց ու դարձ անողին խօսք նետել և ասլն. չեն տեսնել զգեւելի շաբաթ երեսները, մի արւատ, որ ոչ միայն ասլ քաղաքի նաև արւարձաններումն է ծաղկել, ասլ և հեռաւոր գիւղերում, որ տեղից գեղջկուհի քաղաք է գալիս ասլիւր ծախելու և դորա փոխարէն եւրոպական փողի և ներկեր առնելու՝ կարծես թէ իւր ասլիւրը ձեռք չէր տալ...

Ես արդէն գիտաւորութիւն ունէի Քիոսի մի հեռաւոր գիւղ տեսնել և ահա լոների անվերջանալի Ալ-Խորգիների, Ալ-Ֆոթիների (սրբերի) սօնախմբութիւններից մէկը կատարում էր Ալ-Խորգի գիւղում, որ կղզու գլխաւոր լեռնաշղթաներից մինի վրայ էր գտնուում: Ուտի ես իմ հալ բարեկամի հետ մի մի էշ վարձեցինք և դէպի հանդիստեղին շտապեցինք: Այս գիւղը քաղաքից 2¹/₂ ժամ հեռաւորութիւն ունի, եւ երկուսի մէջ հիմա բաւականին լաւ ճանապարհ է շինուում, որ խճուղիի նմանութիւն ունի, թէն զեռ. չէ վերջացած: Ամբողջ տարածութիւնը մշակած է և ծածկւած իզմիրի նման՝ ալգեստաններով, ձիթատաններով, նշենիններով, ալծապող առած պտուղ տուող ծառերով և ասլն: Բաց ամենից շատ աչքի են ընկնում ընտիր նշենինները և մազղաքի ձիւթի թուփերը, որոնք երկրի գլխաւոր բերքերն են կազմում: Այս ձիւթի ծառը (*pisacia lantiscus* L.) մի արշինաչափ թուփ է, ձառն հաստ ու կարծր մանրիկ տերևներով, տձև բունով, որ ամառւայ վերջերը դանակով վիրաւորում են առաւօտեան ժամանակ և ասլ վէրքերից ասլէ հիւթը հոսեցնում: Շէրցերը հաշւում է, որ Քիոսն արդէն 1873 թ. տարեկան 1,200,000 ֆլորին եկամուտ է ունեցել միայն ասլ ձիւթից:

Ճանապարհին մենք տեսանք մի քանի գիւղեր, որոնք բաւականին կանոնաւոր տներ ու փողոցներ ունէին: Տներից շատերը երկրաշարժի փլատակներն էին ցուց տալիս: Մենք քանի բարձրանում էինք, ասլքան քար ու ապառաժը շտտանում էր, բաց և ասլպէս՝ ասլ վերին ատոլճանի ժրաշան ժողովուրդը տեղի նեղութեան պատճառով ահագին ապառաժներ փչել, քարքարոտ տեղերը մաքրել և ալգետոտաններ է տնկել: Ալ-Խորգի գիւղը, ուր մենք հասանք 2¹/₂ ժամ լետոյ, ծխի բոլի նման ապառաժների ծալերին է շինւած: Տները մի կամ երկուբլանի են. երկուսն էլ հաստ որմերով, քար ու կրով և կամարապատ: Աս տներն ամբողջովին քարից են և եթէ ասլ լոնները նախնի ցիկլոպների ութն ունենալին, երևի դռներն էլ սալաքարերից պէտք է շինէին: Վարի լարիք գետնափոր է և կենդանիների համար է, իսկ վերինը՝ մարդիկներին: Այսպէս պնդակալում են

շինում՝ երկրաշարժին դէմ՝ դնելու համար. և լիբաւի ալս գիւղն ազատուել էր վերջին սարսափելի երկրաշարժից. Երեսկալեցէք ալս խեղճ ժողովրդի դրութիւնը ալդ քարերի մէջ ձմրան սարսափելի ցրտերի ու մրրկների ժամանակ:

Այդ մարդիկ միւս լոյներից շատ չեն տարբերուում իսկ կանաչք ցարդ տեսածս լոյներին նմանութիւն ամենեկին չունին. Իրանց շատ թխագոյն երեսներով, դողաւոր քթերով երբեմն մեծ ծնօտներով մի տեսակ խառնուրդ էին, որ դժւար էր մի տեղի նմանեցնելը. Պառաւանքն իրանց հագուաններով ու արտաքին կերպարանքով նմանում էին կովկասեան թուրքերին: Այս կողմում իւրաքանչիւր գիւղ ունի իւր սեպհական տարազի զգեստը, որոնք իրանց ձևով ու խտուռովի գոյներով շատ նման են աւստրիական սլաւոնական ցեղերի կանանց հանդերձանքին, որ ես տեսալ երեք ու կէս տարի առաջ արտասահմանից վերադառնալիս:

Մեզ հիւրասիրեց բարեկամի ծանօթ մի ընտանիք. Մալր, հալր, տղալ, աղջիկ աչնալիս պարզ և մոերմական լարաբերութիւն ցուց տւին, որ ես կարծեցի, թէ ողեսեան ժամանակների նահապետական կեանքն եմ տեսնում, գոնէ ես ալդ ցանկանում էի: Մեզ նախ մի մի բաժակ օղի (ընտիր մաստիքա) տալով և ամեղէ՝ հրամցնելով՝ առաջնորդեցին դէպի գիւղական ուսումնարանը, ուր ալս առթիւ հանդիսաւոր քննութիւնն էր կատարուում: Բաւականին ընդարձակ սրահը լի էր երկսեռ հանդիսական գեղջուկներով, որոնք վերին աստիճանի լարած ուշադրութեամբ լսում էին: Քաղաքի գիմնադիտնից մի մասնաւոր քննիչ էր եկել: Սա թէև լուսարէնը շատ քիչ էի հասկանում, սակայն անմըջապէս խմացալ, որը որոշ լինելը, Թւարանութեան դաս էր, դրատախտակի առաջ շարած էին 8—10 փոքրիկ աշակերտներ: Մինը հարցեր էր տալիս ու խնդիրներ առաջարկում, բալց նորան չէք հասկանում: Այս հարցաքննողի մօտը նստած էր մի երիտասարդ կարմրած, կրակոտ աչքերով. դա՝ ուսուցիչն էր: Աջ և ձախ կողմերը քահաներն ու հողաբարձուները: Ուսուցիչը միայն երբեմն էր միջամտում, երբ խեղճի համբերութիւնը բոլորովին կտրում էր: Մեզ ալսքանը բաւ էր շաշից լիտոյ մենք ալցեւութեան գնացինք ուսուցչին, որի մօտ հացի էր հրաւիրւել քննիչը և նոր հեռացել: Վերջին բաժակները ուսուցիչը խմում էր իւր մի մտերմի հետ՝ սիրտը հովացնելու համար: Սրբ մեղ տեսաւ և խմացաւ, որ ես իզմիրի հալ վարժարանների տեսուչն եմ: Եւրոպայում ուսում առած՝ շատ ուրախացաւ Հարցրեց թէ միթէ կարելի էր աչնալիսի հակատրամաբանական խնդիրներ առաջարկել. ես ասեցի ճշ. Դիտէք ինչ կալ, ասեց խեղճը, նա ինձ հետ լաւ չէ... Յետոյ ներողութիւն խնդրեց, որ զուլսը խառնած լինելով՝ աչն բռնէին մոռացել էր մեզ ճաշի հրաւիրել: Մենք մի մի բաժակ խմեցինք վարժապետութեան կենացը, որ ամեն տեղ նույնն է, և իրան հետ հանդիսավարը գնացինք, որ մի նեղլիկ փողոցում գինեւան առջև՝ ապստափ վրալ էր:

Մինչ այս մինչ այն՝ պարողները հաւաքւում էին։ Աղջիկները 20—25 քալափոխ հեռուն են կանգնում և սպասում որ երիտասարդը ձեռքով անէ կամ թաշկինակը ծածանէ։ Այսպէս զող զող բռնում են թաշկինակի ծալերից և աշուղների գողը մի քանի հատ պղնձեայ դրամներ լցնելով՝ ոկտում են պարել այլ և այլ եղանակներով, որոնք շատ նման են մեր կովկասեան «բալաթիներին», «միրզալիներին» և այլն։ Պարելիս երկուսն էլ վալր են նստում, բայց հող չէ, ի հարկէ, եթէ գլխովցած երիտասարդը մի մի անդամ հրացալտ ակնարկներ խլէ... Որքան տարբերութիւն Խզմիրի շրջակայքի և այս գեղջկուհիների մէջ։ Ամեն բան ալտոնդ իւր բնական գոյներով է։ Պարելիս երիտասարդները օղի են առաջարկում պարող ընկերին և կամ աշուղին դրամ տալիս։ Մենք մեր ծանօթներին պատելու համար՝ այս վերջին միջոցն ընտրեցինք և երբեմն էլ առաջինը։

Քաղաքից եկած քննիչը մեզ տեսնելով մօտեցաւ Խօնեցիք քննութեան մասին, որի վերաբերմամբ իմ կարծիքը չպահնցի։ Քահանան ու հոգաբարձուներն լարած ուշադրութեամբ լսում էին։ Յետոյ դէսից դէնից, վերջապէս և երկու եկեղեցիների չարաբերութեանց մասին։ Ահա նաև այս ուսուցիչն էր, որ խօսք բացեց Հայաստանեայց եկեղեցու լուծակների հետ միանալու պէտքի մասին, որ 19-րդ դարու գաղափարներով մանաւանդ հնչող էր իբրեւ մոլեռանդութիւն ապացուցանելը...

Երեկոյեան կողմ մենք հարկադրւած էինք հրաժեշտ տալ մեզ հիւրասիրողներին և այս հանդիսականներին, որոնց չարաբերութիւնները, պարերն ու եղանակները մի քանի անգամ իմ սիրտը շարժեցին թէ իրանց պարզութեամբ և թէ իմ հայրենիքի գեղջկական սիրելի նահապետականութեամբ։

Միւս օր իմ հալ բարեկամն հետ դարձեալ մի մի էշ վարձեցինք ու դէպի «Հոմերեան Ապառաժը» ուղևորեցինք, որ գտնւում է Վրնդուզ գիւղում՝ Քիոսից $\frac{3}{4}$ ժամ հեռու։ Ծովափնեայ ճանապարհին մենք նախ մտանք Լիւադիա գեղեցիկ գիւղը, վերովիշեալ բարերար Գէօրգի Վուրուի ծննդատեղին, ուր այս ազնիւ մարդն արդէն վերջացրել էր մի գեղեցիկ երկսեռ ուսումնարան 10,000 ֆր. ծախսով, սորա համար 5000 ֆր. և 3 աղջիկների հասցթն էլ եկամուտ էր կապել և անմիջապէս մի փառաւոր տաճարի շինութիւն սկսել, որ վերջանալու վրայ էր։ Այսպիսի գեղեցիկ եկեղեցի Խզմիրի լոյներն էլ չունին։ Այս շէնքի համար 60,000—70,000 ֆր. էր նշանակել։

Լիւադիայի գիւղից $\frac{1}{2}$ ժամ հեռու գտնւում է Վրնդուզ գիւղը, ուր բարձրանում է «Հոմերոսի Ապառաժը»։ Սա բարձր լեռից զատւած մի բրդաձև քար է 20—25 ոտաչափ բարձրութեամբ։ Կենտրոնում գտնւում է նոյն կտորից մի նստարան, իսկ շուրջը նոյնպէս մի ամբողջը՝ քննարանով, Աւանդութիւնն ասում է, թէ այս լուծակն ամենամեծ բանաստեղծը նստում էր այդ ապառաժի կենտրոնում և իւր աշակերտներին ու ժողովրդին պատում իւր տեսած լսածները և միևնույն ժամանակ հիանում այդ սքանչելի տեսարանի։

ներով, ուր բարձրաբերձ լիւններ, կիրճեր, ալպետաւաններ, զեղեցիկ ծով ու բաղնաթիւ կղզիներ նորանոր սնունդ էին տալիս նորա բանաստեղծական հանճարին, որ նաև ներկայ դարուս մէջ իւր անփոխարինելի դիրքն ունի և պէտք է լարատե՛լ։ Եթէ, ինչպէս կարծիք կալ, Հոմերոսը մինչև անգամ դուռնիքն ունեցած չը լինէր, աչնու ամենալին ևս հաւատում եմ, որ ալի բանաստեղծ ժողովրդի ¹⁾ շատ ծերովներ բարձրացել են աչն բնական ամբիւնը և հմայել հետաքրքիր լսողներին հիանալի աւանդութիւններով։ Լսողները մաշել են ալի ապառաժը, Բալց ինչ է 30 դարը մարդկութեան պատմութեան մէջ. 40—50 սերունդներ, որոնք բերնէ բերան կարող էին աւանդել, իսկ Տրուադայի պատերազմը Հոմերոսից 270 տարի առաջ էր տեղի ունեցել, որ 3—4 սերնդի կեանք ասել է։

Արձակուրդների պատճառով քաղաքի ուսումնարանները փակ էին, որոնց թւում՝ նաև գիմնազիոնը, որ մեզ մասնաւորապէս հետաքրքրում էր։ Կղզու ալս բարձրագոյն հիմնարկութիւնը չինւած է նորակառուց եկեղեցու հանդէպ նոյն հրապարակի վրայ, ուր որ թանգարանն է գտնւում։ Այս երեք ճաշակաւոր շէնքերն իրանց ամբողջութեամբ զեղեցիկ տպաւորութիւն են գործում թէ իրանց արտաքին երևութով և թէ ներքին խորհրդով։ Այս գիմնազիոնը, ինչպէս նաև ալ կղզիների, Փոքր-Ասիայի, Բալկանեան թերակղզու նոյնանման հիմնարկութիւններն իրանց ծրագիրն ու հրահանգները ստանում են Աթէնքից, որ ալսպիսով մտաւոր ու բարոյական կապեր ունի բոլոր լոյճների հետ, մանաւանդ որ շրջանաւարտների մեծամասնութիւնը պատրաստւում է մալրաքաղաքի համալսարանը մտնելու ²⁾, թէև, ի հարկէ, ալս համալսարանը տակաւին շատ նոր է և հեռու եւ։

¹⁾ Գերմանական Հռչակաւոր վիպասան Յ. Շպիլհադէնն այս խնդրի մասին հետեւեալն է գրում իւր «Beiträge zur Theorie und Technik des Romans» վերին աւարիճանի հետաքրքրական երկրում. «Նա (Հոմերոսը) ինչպէս այլ ուր ևս արտայայտեցի, ոչ միայն իւր ժողովրդի բանաստեղծական բերանն է, այլ և իւր բանաստեղծ ժողովրդի բերանը»։

Մէ այլ երեսում ասում է... նրանց (ժողովրդական բանաստեղծների) մտածողութիւնը, զգացմունքն և հայեցածքը իրանց ժողովրդի մտածողութիւնն, զգացմունքն ու հայեցածքն էր։

²⁾ Զմաբիւս որ յայնքը շատ օրինակելի յատկութիւններ ունեն այն խնդիրներում, որոնց վերաբերում են իրանց ազգի պաշտպանութեանն ու յառաջագնացութեանը։ Մակեդոնիայում մտաւոր ու բարոյական աշակերտը կռիւ են մղում իրանցից ոչինչ բանում պակաս չը մնացող բոլորների հետ. առաջիկանքը միջոց չեն խնայում բուլղարախոս բաղնաթիւ գիւղերը յունացնելու, իսկ երկրորդները՝ յունախոսներին բուլղարացնելու։

Իսկ մե՛նք, մե՛նք ունենք մի համազգային Գէորգեան ճեմարան, որ հետզհետէ կորցնում է այն կարեւոր նշանակութիւնը, որ նորան գրոշմել էր երջանկային շատակ հիմնադրը։ Ուրախալի է սակայն, որ հիւսա այլ կերպ են մտածում ու գործում էջմիածնում։

լրդականները չարքում հեղինակութիւն ունենալուց, սակայն ունի որոշ չափով կարեւորութիւն լեզւարանական և հնախուզութեան տեսակէտից մանաւանդ ավուած լոյների համար: Բոլոր լուծական ժողովրդական ուսումնարանները գիմնադիտնի ճախադուռն ևն համարում, ուստի և վերջինս ունենում է միայն միջին և բարձր դասարանները: Գիմնադիտնների ծրագիրը էական կէտերում տարբերութիւններ չունի ևւրդական ճոշնանման հիմնարկութիւնների դասընթացներից, սակայն, ի հարկէ, լուծական գիմնադիտններն աւնքան տոոր պէտք է լինեն ևւրդականներից, որքան անէնական համալսարանը՝ իւր նմաններից:

(Եւ շարունակի)